



Ա Բ Ա Ր Ա Ս

ԹԻՒ Ժ. — ԵՐԴԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՀԱԿՏԵՄ. 31.

ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԱՐԴՍ ԵՒ ԻՒՐ ԳՄՐԾՆ.

Առաջի Սույն. Ժ. 9. 3:

Աշխարհիս երեսն ապրող մարդն ի՞նչպէս մեծ ու զօրաւոր է կարծում իրան։ Նա հանգիստ չէ մնում, անդադար ջանք է անում, անդադար աշխատում, ու կարծումէ, որ պէտք է յաջողի իրան բարձր վիճակի մէջ տեսնելու։ Բայց հազվ տեսնումէ հեռուումն իւր նպատակը, մէկ էլ տեսնումէ, որ մայն եկաւ, վրայ հասաւ։

Մենք չենք մեզ տռաջ տանողն, այլ այն աներեսյթ Զօրութիւնն, որ ամեն մէկ մարդու պարզեւումէ իւր բաժինն, և "ո մեզ առաջնորդողը լինելով գէպի մեր ունենալու վիճակն,

Հրամայումէ մեզ թէ մինչեւ այս տեղ է քո գալուդ տեղն, եւ այն կողմն պէտք չէ անց կենաս. դու բանը սկսեցիր, բայց թէ սկսածդ այնպէս դուրս կգայ վերջն, ինչպէս որ դու ես ցանկանում, այդ ամենակարող Աստուծոյ ձեռին է:

Զուր է: Մենք ջանք ենք անում աւելի լաւ. սիճակի հասնելու և զուր ենք աշխատում պատահմունքների անդիմադրելի հոսանքի դէմ. կեանքի ալիքները բարձրանում են դէպի մեզ գալով, միքայ են հասնում, խփում մեզ ու կոտրում մեր ոյժը, միջոց չտալով մեզ աշք բաց անել, որ հասկանալ կարողանանք թէ՝ ինչ ենք լինում: Երեխայութեան օրերիցս սկսած հարիւրաւոր, հաղարաւոր բաներ եմ մոքումն զրել անելու, շատ ու շատ ցանկութիւններս խթան են տուել ինձ ու շարժել, ոչ գիտէ, ինչ ինչ բաների ձեռնամուխ լինելու: Եւ ի՞նչ է դուրս եկել: Շատ է պատահել ինձ տեսնել, որ մոքումն զրածն ու ցանկացածս՝ միայն մի օր է կեանք ունեցել. ինչպէս որ այն օրն իմ մէջս ծնել է, այն օրն էլ մեռել. շատ անգամ պատահել է, որ մոքումն զրածն այս տարուայ մէջ չեմ կարողացել գլուխ բերել, եկող տարուան մէջ եմ ամենայն ջանք ու աշխատութիւն արել, որ գլուխ բերեմ, և վերջապէս, երբ որ կարծել եմ թէ՝ քիչ մնաց նպատակիս հասնեմ, մի փոքրիկ ըստ ինքեան աննշան դիպուած՝ էլի դէպի յետ է քցել ինձ իմ նպատակից ու հեռացրել: Սրտիցս ախ քաշելով, ունեցած յոյսս կորցրել եմ, այն յայսս, որ տարիներով ինձ ուրախացնում էր ու խարում:

Երբոր միտքս եմ բերում իմ երեխայութեանս գեղեցիկ ժամերն, ախ, ինչպէս այն ժամանակ ամեն բան ուրիշ կերպ էր: Ի՞նչպէս սաստիկ ու կատաղի կերպով ուզումէի անպատճառ որ երբեմն այս, երբեմն այն լինիմ, երբեմն այս, երբեմն այն բանն ունենամ: Հազարաւոր ակնկալութիւններիցս մէկն էլ չկատարուեց. մէկը միւսին արգելք ու խափան եղաւ. յոյսերս՝ ծառերի նման բոլորովին բացուել էին ու շատ ծաղիկ տուել. երկնքից մի փոքր քամի փշեց՝ ու բոլոր ծաղիկները թափուեցան. զուր էի ամեն կողմ մոխիկ տալի թէ՝ պտուղ կըերեն արդեօք:

Տարիքով աւելի մեծացայ, ու զգացմունքներս միայն աւելի

գիւրագրգիո դարձան. Նոր ցանկութիւններ ծնան իմ սրտիս մէջ. նոր, փայլուն յառա կազծեր շինեցի լմ մաքումս՝ այնպիսի կախարդիչ գեղեցկութեամբ, ինչպէս որ ընդունակ է այդ անել վառ երեւակայութիւնը։ Մտիկ տուէք այն օրիորդին, տեսէք թէ՝ ինչպէս է նա մոռածմունքների հետ ընկած, ինքն իրան կորցնում՝ իւր ապագայի վերայ ունեցած ցնորքներովն, տեսած՝ չկտտարուելու երազներովն՝ ու իւր ծածուկ ցանկութիւնների կատարմանը համար ջանք անում։ Մտիկ տուէք այն երիտասարդին, որ լաւ զգալով, որ ինքն ամեն կողմից պատ է և ոյժ իրան պակաս չէ, բոլոր աշխարհս իւր առաջը բայ է տեսնում, ու կարծում է թէ՝ ձեռքից կգայ ամենալաւրանին հասնելու։ Յետոյ մտիկ արէք սորանց հետ այն կատարելահասակ մարդուն, տարիքն առած այն տանտիկնոցն ու մօրն, որ իրանց երեւակայութեան մէջ արդէն բաղդաւորութեան հասած էին կարծում իրանց։ Մտածմունքի մէջ ընկած մոլորուած ու գլուխները քաշ արած են գնումնոքա այն ցանքի մօտն, որ ցանել էին, ու տեսնում են, որ հազարաւոր սերմեր՝ ծլած ժամանակն՝ ոչնչացել են։ Իրանց զաւակներից, որ իրանց պարծանքը պէտք էր լինէին, ամենասիրելիներն արդէն չկան, գերեզման են մտել, լաւ բարեկամներից, որոց հետ մտքներումն ունէին ուրախ կեանք անցկացնելու, կէսից աւելին պակասել են։ Իրանց մոքումն արած հաշիւներից՝ թէ լաւ անունի, լաւ փողի տէր կղառնան, գործունէութեան լաւ շրջան կունենան, տեսնում են, որ հազիւ մի ստուերը կատարուեց։

Կեանքից ձանձրացած ծերունին, հրաժարուելով աշխարհիցս, գնումէ դէպի իւր կեանքի սահմանաքարն։ Անցնալը նորա համար այն տեղն էր աշխարհումս, ուր որ շատ խարուեց։ Նոր աչքն այս կեանքիցս դէպ ի վեր, դէպի այն տեղն է ուղղում, ուր որ խարէութիւնները վերջ պէտք է ունենան։ Ինքն իրան ասումէ. մի ժամանակ հսկայի ոյժ ունէի, երկաթի ինքն իրան ասումէ. մի ժամանակ հսկայի ոյժ ունէի, երկաթի գիմացկունութիւն—բայց և այնպէս իմ ամենալաւ կամքս չկատարուեց։ Իմ պատաճեկութեան ցնորքներիցս ի՞նչ մնաց ինձ։

Սուտ չէ, երեսումէ, որ ամեն մարդոց բանն այնպէս ձախ չգնաց, ինչպէս իմն։ Նատերն իրանց մտքում դրած ըաները

կատարուած տեսան. նրանք հասան իրանց դիտաւորութիւնը ներին, ու այն եղան, ինչ որ ուղում էին լինել, երբ որ ես նորանց կեանքի հանգամանքներն եմ քննում, տեսնում եմ, որ ինչ որ նորանք ձեռք բերին, իրանց կողմից շատ քիչ էին աշխատել ունենալու, որ նորա առանձին յաջող հանգամանքներ ունեցան, ու շատ անդամ՝ իրանց մոքում գրածներին հակառակ՝ այնպիսի բաների հասան, որ յետոյ իրանց համար շահաւոր եղաւ. մինչդեռ ուրիշներն, որ առաջ իրանցից աւելի զօրաւոր էին, աւելի հարուստ ու աւելի պատիւ և նեցողներ, բոլոր իրանց ոյժն ու խելքն ոչինչի տեղ անց կացաւ, ու իրանց ունեցած աւաջաւայ բարձր ու բաղդաւոր գիրքը կորցրին ու ընկան:

Այս մեր տեսածն ու հասկացածն մեր կեանքի մէջ՝ թէ որ չափ անհաւասար է մեր ջանքի ու գործի հետեւանքը, շատ ժամանակներով առաջ զբաղեցրել է շատ իմաստուն ու մեր ունեցած կեանքի համանքները քննող ու նկատող մարդոց ու շաղրութիւնն ու մտածողութիւնը: Նոցանցից քանի քանիսը՝ հին ժամանակներումը՝ հաւատում էին, որ մի աներեւոյթ իշխող կայ, որ իւր կոյր և երկաթի կամքովը կառավարում է երկնքի մէջ ու երկրի վերայ եղած ու պատահած բաները. հաւատում էին մի ճակատագրի, որ, առանց մտիկ ուալու մարդոց արժանաւորութեանն՝ կամ անարժանութեան, նորանց հետ խաղում է, ինչպէս, որ ինքն իրանից անտեղեակ լինելով, և առանց ինքն էլ իմանալու թէ՝ ինչ է անում, տոանց մի որոշ ծրագրի: Իւր ուղեցածն անի ու խաղայ մարդոց՝ լաւ կամ վատ վիճակի հետ. այլ կայ մի գերագոյն իմաստութիւն, որ կառավարում է հրաշալի կերպով՝ ինչպէս ընդհանուրն, այնպէս և մտսնաւորը, որ տնօրինում է՝ ինչպէս ամենափոքրիկ որդնի վիճակը, նոյնպէս էր մի շատ մեծ ազգի:

Մարդու ունկ շնչէ է-ը էլլանո-լետն առէ, այս լետն է-լետն: Միայն մարդուն հագնին է պատկանում իրան: Նա կարող

է իւր կամքի լվերայ իշխել, հրամայել նորան այն ինչ որ բարի
է, կամ չար, կարող է իւր մտքումը դնել, որ իւր խելքի կա-
նոնովը ճառածի, Աստուծոյ յաւիտենական օրէնքներին հա-
մեմատ կամենայ ու գործի, կամ թէ՝ լսել ու հնազանդել իւր
զգայական ցանկութեանց գրգիռներուն, Առանից աւելի բան
անելու իշխանութիւն չունի: Սկառը պատկանում է իրան,
իահան պատկանում է իրան, գործը պատկանում է իրան, բայց
գործի հետեւանքն ու արդիւնքն իրանից կախում չունի, իւր
իշխանութիւնից գուրս է նա քցում է իւր միտքը կեանքի
հոստնքի մէջ, այնտեղ դառնում է նա խաղալիկ հաղարաւոր
փորբիկ՝ միասին գործող՝ ալիքների, որոց ուժն ու ուղղութիւ-
նըն ոչ որ հաշուել, իմանալ չէ կարող: Նատ բանից, որ մարդու
ձեռնամեւխ է լինում անելու, և որի համար գործ է գնում
ամենամեծ աշխատութիւն, ամենաշատ մտածմանը ու հոգա-
ցողութիւն՝ և որից յոյս ուներ տեսնել իւր համար ամենա-
փայտուն հետեւանքներ, ստանումէ նա ամենաչիշին արդիւնք:
Ենդ հայութեան քանի ու քանի քաներ, որոնցից չէր կարծիւ
թէ՝ մի օգուտ կստանայ, ունենում են անակնունելի հետե-
ւանքներ ու իւր քաղաքակիցների աչքում՝ իւր կումից արած՝
կամ մեծ ծառայութիւնների, կամ մեծ սխալանքի տեղ են
անց կենում:

Աթէ որ մարդ ու բռնած լունի ունենալու հետեւանքը՝ կամ
վերջն այնպէս իւր ձեռքը լիներ, ինչպէս որ իւր կամքն իւր
ձեռին է, այն ժամանակ նա ինքն էլ մի Աստուած կլիներ: Բայց
մեզանից դուրս մի կառավարող Աստուած կայ: Նա իշխում է
սիրտեկ, ուր որ մեր ոյժը չէ հասնում: Ամենակարող զօրու-
սիրտեկ, որ առաջնորդումէ ու կառավարում հանգամանք-
թիւնն է, որ առաջնորդումէ ու կառավարում հանգամանք-
թիւնն է, որ առաջնորդումէ ու մեր զիճակը: Մենք, մեր սաստիկ սահ-
ները, զիպուածներն ու մեր զիճակը: Մենք, մեր սաստիկ սահ-
ների, հասկացողութիւններովը զործում ենք կոյրերի
մանակակ: Հասկացողութիւններովը զործում ենք կոյրերի
մանակակ: Հասկացողութիւններովը զործում ենք կոյրերի մէջ,
ուման մատթ ու շփոթ զիպուածների ու պատահմունքների մէջ,
առանց մի անզեկութիւն ունենալու, թէ մեր արած բանիցն
լինչ դուրս կգայ: Մեր գործն ազնուացնումէ՝ ոչ թէ նորա ու-
նեցած արդիւնքն, այլ այն գործն անելու ժամանակ՝ մեր ու-
նեցած կամքը, մեր ազնիւ զիպաւորութիւնն է, որ նորան ար-
նեցած կամքը, մեր ազնիւ զիպաւորութիւնն է, որ նորան ար-
նեցած կամքը է տալի, մնացածը մենք չենք կարող մեր հաշուի տակ
քցիւ ու իմանալ առաջուանից:

ԱՌԵ, ԻՆՉՈՒՄ ՊԵՐԵՄՆ ՉԱՄ ԱՆԳԱՄ ԽԱՐՈՒՄ ԵՒ ԻՆՔՍ ԻՆՃԱ
ԵՐԲ ՈՐ ԽԱՐՈՒԵԼՈՎ, ԿՉՈՌՈՒՄ ԵՒԻՄ ԲՈՆԹ ԳՈՐԾԵՐԻՍ ԱՐԺԵՔԸՆ
ԻՐԱՆՈ ՌԵՆԵԳԱԾ յաջող՝ կամ անյաջող արդիւնքովն։ ԻՆՉՈՒՄ
ԿԱՐՈՂ ԵՒ ԱՅՂՋԱՎԻ ՀԱՐԱՀԱՐ ՍԽԱԼՈՒԵԼ, ՔԱՆԻ ՈՐ ԵՍ, ԻՄ ԱՐԱԾ
ՉԱՄ ՈՒ ՉԱՄ ՓՈՐՃԵՐՈՒՄ, ԱՅՆ ՀԱՍՏԱՄ ՈՒ ՄԵԾ Ճշմարտութեան
ՄԵջ ԱՐԴԵՆ ՎԱՂՈՇ ՀԱՄՈՂՈՒԱԾ ԵՒ, ԻՆՉՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՒ ՉԱՄ
ԱՆԳԱՄ՝ ԱՅՆՅԱՎԻ ԱՆՄԻՏԱԲԱՐ՝ ԻՄ ՌԵՆԵԳԱԾ ՈՒԺԻՍ ՎԵՐԱՅ ԱՊԱՐ-
ԾԵՆԱԼ, թէ ինձ այս ՈՒ այն բանը գեղեցիկ կերպով յաջողեցաւ,
ԵՐԲ ՈՐ ՄԻ ՉԱՄ ԱՆԻՉԱՆ ԱՊԱՏԱՀՄՈՒՆՔՈՎ, ՈՐ ԻՆՃՆԻՑ ՀԵռացնել
չէի կարող, ամեն բան ուրիշ կերպ կարող էր դառնալ, Յան-
կարծ բարձրացած մի մըրիկ ոչնչացնում է ՉԱՄ ՄԵԾ ՆԱԼԱ-
ՄՈՐՄԻՂՆԵՐ, մի ցուրտ՝ կամուրջներ է շինում լճերի ու գետե-
րի վերայ, որոնց վրայով անց են կենում թշնամի զօրքերը, մի
աչքի չընկնելու պատահմունք՝ մատնում է ու յայտնում ծած-
կամիտ ու գաղսնագործ մարդու ծրագիրներն՝ ու զուր հա-
նում։ մի հասարակ հանգամանք վերջայնում է իշխողների
կեանքն, ու փոխում ամբողջ ազգերի վիճակն։ Ով կարող է
առաջուանից իմանալ, թէ ինչ կը երի այս քառորդ ժամն, որ
ահա այժմ պէտք է անցկացնեմ։ Արդեօք ՉԱՄ ԱՆԳԱՄ ՓՈՐ-
ՃՈՎ ԷԼ ՀԵՄ տեսել, որ ՉԱՄ բան, ինչ որ սուրբ Նպատակներով
չէ եղել, վերջապէս շատերի համար ամենաբարերար հետեանք
է ՌԵՆԵԳԵԼ, և թէ ՉԱՄ բան վնասակար ներգործութիւն է ՌԵ-
ՆԵԳԵԼ, ինչ որ տմենալաւ գիտաւորութիւններով է սկսուած
եղել։

Ապագայում իմ՝ այլոց վերայ արած գատողութիւններին
մէջ՝ զգոյշ կլինիմ, ինչու որ պէտք է ցանկամ, որ ուրիշ-
ներն էլ ինձ վերայ այնպիսի գատողութիւն անեն, որ ընդու-
նելի լինի։ Սողոմնն իմաստունի հետ՝ իմ բոլոր ապագայ ձեռ-
նարկութեանցս մէջ կասեմ։ Յանչնէր Տէրոջ ու Քոջերոջ, ու
մասունքներոջ առաջ իւրինան, — Այսինքն է՝ գործիր՝ Աստու-
ծոյ կամքին համեմատ, թէ ինչ գուրս կգայ արած գործիցդ,
այդ Աստուծոյ բանն է։ Դու ինքդ քեզ ոչինչ չես կարող անել.
ամեն բան նորա օրհնութիւնիցն է կախուած։

Իսկ ի՞նչ է Աստուծոյ օրհնութիւնն, որ ցանկանում ենք մեր
արած գործերի հետը լինի։ Արդեօք այն է միայն, որ միշտ
մեր գիտաւորութիւնները յաջողուին, որ մեր ցանկութիւն-

ները կատարուի՞ն և Անշուշտ ոչ, պատճառ որ՝ ի՞նչպէս անմիտ
են՝ շատ անգամ կարձատես մարդոց նպատակներն, և ի՞նչպէս
շատ անգամ յետոյ՝ արդէն բաւական ուշ՝ շնորհակալ ենք լի-
նում երկնքին, երբ որ անենում ենք, որ մեր ունեցած նպա-
տակներից, եթէ որ յաջողուէին ու կատարուէին, մեզ՝ կամ
ուրիշների համար՝ ծանր վնաս կարող էր յառաջանալ. այս,
յետոյ ենք հասկանում, որ մեր նպատակների հենց չյաջո-
ղուելն՝ իոկապէս մի մեծ բարիք եղաւ:

Աստուծոյ օրհնութիւնն, որ մեր աշխատութիւնների ու
զործերի հետն է լինում, աւելի մեր գիտակցութեան մէջն է,
որ լաւ իմանում ենք թէ՝ մեր պարոքերը հաւատարմութեամբ
ենք կատարում և դորանից յառաջացած մեծ ու փոքր բարիքն
ուրախ ու շնորհակալու սրտով ենք ընդունում Աստուծա-
նից: Մի փոքրիկ օգուտ, մի շատ չափաւոր կարողութիւն, որ
ձեռք բերինք, մեզ համար ամենասուրբ օրհնութիւն կարող է
լինել, եթի որ մեր խղճմանքը մեզ վկայումէ, որ մեր ունե-
ցածին՝ մեղքի ոչ մի արատ կալած չէ: Ընդհակառակն՝ հարլու-
ցածին ամենամեծ գանձն՝ որ ոնինք ու ծուռ ճանապար-
հատիքն է մեր ձեռքն ընկած, այս գանձի հետն ունեցած մեր սրբ-
ութիւնն անշանգուստութիւնն՝ անվերջանալի անէծք է դառնում
մեզ համար:

Ա.Հայոց բան Ա.ստուծոյ օլհնո-Ռեան մէջն է։ Կ'նչպէս իսոր կեր-
Ա.Հայոց բան Ա.ստուծոյ օլհնո-Ռեան մէջն է։ Կ'նչպէս իսոր կեր-
պով եմ զգում ու հասկանում այս ճշմարտութիւնն որչափ
որ աւելի եմ ապրում աշխարհիս երեսին, ու կեանքի փորձե-
րով տեսնում։ Բայց այս ճշմարտութիւնը չպիտի ինձ նոր
սխալանքների մէջ քցի, ոչ էլ այն մտքին պէտք է տանի թէ՝
որովհետեւ ես ինքս ինձ ոչինչ չեմ կարող անել, ուրեմն ամեն
հոգսերս էլ Աստուծոյ թուղնեմ անելու։ Միայն անմիտ մարդն
է ասում։ «ինչո՞ւ պէտք է անզադար աշխատեմ», ինչո՞ւ ինձ
է ասում։ «ինչո՞ւ պէտք է անզադար աշխատեմ»։ Եթէ որ Աստուծ
ամեն տեսակ նեղութիւններով չարչարեմ։ Իսկ որ Աստուծութիւնը
կամեցել է իմ գործո օրհնել, արտումն ցանած ամենափոքր
սերմիցն էլ՝ հարիւրապատիկ աւելի պառակ կբռւսնի, և եթէ
սերմիցն էլ՝ հարիւրապատիկ աւելի պառակ կբռւսնի, իմ հո-
գա չհնձեմ, հէնց մի կարկուտ իմ բոլոր ոսկի յոյսերս, իմ հո-
գա չհնձեմ, հէնց մի կարկուտ իմ բոլոր ոսկի յոյսերս պառուղները
գացողութիւններիս ու աշխատութիւններիս բոլոր պառուղները
մի բոռկեռմը կոչնչացնի։ — Ծոյլն էլ ասում է երբեմն իւր
մի բոռկեռմը կոչնչացնի։ — Ծոյլն էլ ասում է երբեմն իւր

ուած, և այսպէս տրդաբացնում է իւր թիժեամբութիւնն
ու անգործութիւնն:

Աստուծոյ օրհնութեանը վերայ յոյս ունենալ կարողանալու
համար, պէտք է մենք ինքներս անդադար՝ նէ առջև անէն՝ և ըէ
աղխառէն։ Երբոր ուզում ես, որ Աստուծոյ օրհնի քո հունձդ,
քո ձեռքով, քո աշխատութիւնով ցանած պէտք է լինի արտգ,
և եթէ ուզում ես լաւ պտուղներ հնձել, որումն ամենենին
պէտք է ցանած լինիս։ Եթէ քո կամքդ չար էր, ի՞նչպէս կա-
րող ես զույցոյս ունենալ բարի գործերի վարձատրութիւն
ստանալու, Աստուծոյ օրհնութիւնն այն փրկարար ներգործու-
թիւնն է, որ մեր գործերի հետն է լինում, երբ որ մենք ընդ-
հանուր աշխարհի կառավարութեան օրէնքներին համեմտ ենք
գնում, Եթէ որ մեր արած գործերը հակառակ են աստուծ-
ային տնօրէնութիւններին՝ մեր խղճմանքովն ու բնականա-
պէս, հետեւաբար յառաջ է գալիս անշուշտ միշտ անցածովու-
թիւն, կամ թէ չի յաջողում այն բանն, որ մարդս սրասոյ
ցանկանում էր լինի։

Յոյս մի ունենար ամենին սիրող երկնաւոր հօրիցդ հաւանու-
թիւն ստանալ ու նորա տիեզերական կարգից օգնութեան
գոնել, եթէ որ դու առելութեան հոգւով լցուած, մտածում
ես քեզ նման մարդուց վրէժ հանել։ Յոյս մի ունենալ երբէք
գոչ ու հանգիստ սիրու ունենալ, հասակիդ առած օրերումդ,
երբ որ դու քո ունեցածդ ձեռք եռ բերել ուրիշներին խարե-
լով, կամ նորանց հետ անգութ կերպով վարուելով։ Արդէն
շատ անգամ փորձով տեսնուած է, որ ինչ ճանապարհով ձեռք
են բերուելոր և իցէ հարստութիւն՝ կամ բարիք, նոյն ճա-
նապարհով էլ շուտ ձեռքից գուրս են եկել։ Մտքիցդ անց
չկացնես, որ դու կարող եռ երբ և իցէ լիովին վայելել ընտա-
նեկան կեանքի ուրախութիւններն ու բաղդաւորութիւնն,
երբոր ամուսնական հաւատարմութիւնը չես պահել, երբոր
դու քո զաւակներիդ վաս ես մեծացրել, կամ երբոր դու քո
կըքերովդ անմիաբանութիւն ու հակառակութիւն ես սերմա-
նել քո տանգ մէջ։ Աստուծոյ օրհնութեան հրեշտակը փախ-
չում է այն տանից, որոյ մէջը մեղք կոյ։ Միայն այնտեղ է նա
սիրով ընտելում, ուր որ մշտակէս հասաւատ տեղ ունի Աս-
տուծոյ երիիւղն ու հաւատարիմ ուրը։ Կա տարածում է իւր

բարերար ձեռքերը կենդանեաց վերայ և մինչև անգամ մեռելոց գերեզմանների վերայ ես։ «Մանուկ էի ես՝ ու ծերեցայ ու դեռ երբէք չտեսայ արդարին արհամարհուած՝ կամ նորա զաւակներին, որ աղքատի նման ողորմութիւն հաւաքում են»։ (Սաղմ. Աէ. 12):

Մարդուս սուր աչքն՝ որչափ էլ խորը մտիկ տայ ու թափանցի անվերջ ու խառնաշփոթ իրողութիւնների և կարելի բանների խաղի մէջ։ որչափ էլ մարդս՝ իրրեւ խելօք արարած՝ ճիշտ կերպով իւր խելօքութիւնովն ամեն բան կշռի, հաշուի, կարգի դնի ու գործ ածի, — էլի միշտ մնում է սահմանափակ մտքով ու չէ կարողանում տեղեկութիւն ունենալ հաղար ու մէկ դիպուածներից, որ ամենափոքրիկ ժամի ու ժամանակի դրկից կարող են յառաջ գալ։ Ամենախելօք մարդու ձեռնարկութիւնն անգամ միշտ Աստուծոյ իշխանութեան տակն է։ մի մահկանացու մարդ իւր գերծերի արդիւնքն երբէք չէ կարող իւր արժանաւորութեանը տալ, — ամեն բան առաջնորդող նախախնամութեան գործն է։ Ով որ բոլոր սրտով յանձնվում է երկնաւոր Հօրն, իւր տմենամեծ ձախորդութեան մէջն տնգամ, երբէք երկնաւոր միսիթարութեան կարօտ չի մնալ։

Ուստի, եթէ մաքուր էր դիտաւորութիւնդ, եթէ ազնիւ էր ունեցած նպատակդ, եթէ հասուն կերպով էիր մտածել, որ յափ որ խելքդ հասնում էր, գնա, արա անելու բանդ, և Աստուծոյ յանձնիր քո գործերդ, վստահ լինելով մեր ամենեցուն Հօր բարութեանը վերայ, ինչպէս որ իմաստուն մարդուն կվայելէ լինել։

Ով Հայր երկնաւոր, իմ կամքս չլինի, այլ Քո՞նը, այսպէս էր Քեզ աղօթք անում իմ Փրկիչս. ես էլ նոյն աղօթքն եմ անում։ Եթէ որ իմ վերջին խարիսխո էլ կոտրուի, դարձեալ իմ յոյսս չեմ կտրիլ Քեզնից, ով իմ Աստուծ, ու վստահ կլինիմ, որ իմ Աստուծս ինձ չի թողնիլ։

(Թարգմ. Ճերմաներէնէց) Գրիգոր Նպիսկոպոս Աղափիրեանց.